ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24

*25 հուլիսի 2018թ. N254 որոշման*

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*<<24>> օգոստոսի 2018թ.*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի հուլիսի 25-ի N254 որոշումը՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, աշխատանքային խմբի ղեկավար Գ. Հովհաննիսյանի, աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Է. Ղազարյանի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Ս. Սաֆարյանի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ. Հարությունյանի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ռ. Երվանդյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների, քաղաքաշինության և հողօգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածներով (N1՝ սեփական և պետության պատվիրակված լիազորություններ, N2՝ քաղաքաշինություն և N3՝ հողօգտագործում) ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարի կողմից իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն եղել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Գեղակերտ համայնքի ղեկավարին:

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, աշխատանքային խմբի ղեկավար՝* — Գ. Հովհաննիսյան

*Աշխատանքային խմբի անդամներ՝*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական՝* — Է. Ղազարյան

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ՝* — Ռ. Երվանդյան

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝* — Ս. Սաֆարյան

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ՝* — Մ. Սարգսյան

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար՝* — Լ. Հարությունյան

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավար՝* — Ս. Առաքելյան

Ներկայացված 5 էջ փաստաթուղթ ստացա՝ 28 թերթ [illegible]

***Հավելված 1***
*Հաստատված է*
*ՀՀ տարածքային կառավարման և*
*արտակարգ իրավիճակների նախարարի*
*2015 թվականի օգոստոսի 27-ի*
*թիվ 860-Ն հրամանով*

*«Հավելված*
*Հաստատված է*
*ՀՀ փոխվարչապետ,*
*տարածքային կառավարման*
*նախարարի 2014 թվականի*
*մարտի 3-ի թիվ 11-Ն հրամանով*

*Վարչական Հսկողության Հարցաշար*
***Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող***

I Համայնքի ավագանու գործառույթը՝

1.Համայնքի ավագանին Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք /այսուհետ ՏԻՄ/ օրենքով սահմանված կարգով՝

1) ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան.
2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը.
3) հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
4) որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարիներկայացմամբ.
5) որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.
6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.
7) իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին.
8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս.
9) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
10) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.
11) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:
12) որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ.
13) իր որոշմամբ վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու մասին պայմանագրերը: Համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարները մուծելու մասին.
14) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:
15) Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին: Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված և (կամ) լրացված է համարվում Հայաստանի Հանրապետության

կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

16) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

17) հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը.

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.

19) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

20) քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում.

21) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

22) քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ:

23) Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: ՏԻՄ օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:

24) Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:

25) Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարն ու ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տաս օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

26) Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

ա) աշխատել նույն աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմնարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար.

բ) լինել համայնքի ղեկավար.

գ) աշխատել իրավապահ, պետական անվտանգության և դատական մարմիններում:

դ) Օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև զինված ուժերում ծառայելու կամ ծառայության անցնելու դեպքերում համայնքի ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

27) Համայնքի ավագանու անդամը օրենքով սահմանված կարգով պարտավոր է՝

ա. Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

բ. մասնակցել ավագանու նիստերին.

գ. պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.

դ. մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.

ե. ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

զ. օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.

է. չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին.

ը. անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին.

թ. ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:

28) Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է համայնքի ավագանին:

29)Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| *Դրույթների անվանումը* | *Պահպանված է* | *Թերի է պահպանված* | *Պահպանված չէ* | *Հայտնաբերված խախտումները* | *Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ* | *Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները* |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի առկայություն: | V | | | | | |
| 3. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի բյուջեի առկայություն: | V | | | | | |
| 4. Համայնքի բյուջեի փոփոխությունների դեպքում համայնքի ավագանու կողմից հաստատման առկայություն: | V | | | | | |
| 5. Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն: | V | | | | | |
| 6. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր խնդիրների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 7. Համայնքի ղեկավարի վարձատրության չափի վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 8. Համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման գործընթաց տեղի չի ունեցել: | | | | | |
| 9. Համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 10. Համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 11. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 12. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու դեպքում օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանու որոշման առկայություն, որում նշված է օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում օգտագործման ժամկետը և վճարի չափը, օրենքով սահմանված կարգով ուղղակի վաճառքի դեպքում վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում մեկնարկային գինը, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օրենքով սահմանված կարգով օտարելու դեպքում նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը: | V | | | | | |
| 14. Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 15. Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցության դեպքում իր որոշմամբ համագործակցության պայմանագրերի վավերացում: | Համագործակցությու ն չի իրականացվել: | | | | | |
| 16. Համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու դեպքում անդամակցության և դրանց անդամության օրենքով սահմանված կարգով վճարները մուծելու մասին որոշման առկայություն: | Անդամակցություն չի իրականացվել | | | | | |
| 17. Աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (ՏԻՄ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան) հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 18. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին համայնքի ավագանու որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվա ծում գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 19. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | | | | |
| 20. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 21. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 22. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 23. Իր իրավասության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքներ վերաբերյալ որոշման առկայություն. | V | | | | | |
| 24. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 25. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 26. Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն: | V | | | | | |
| 27. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն: | V | | | | | |
| 28. Համայնքի ավագանու անդամի նկատմամբ օրենքով նախատեսված այլ անհամատեղելի պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ սահմանափակումների պահպանում: | V | | V Համայնքի ավագնու անդամ Մանուշ Լենդրուշի Հովհաննիսյանը աշխատում է <<Գեղակերտի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ում որպես բուժքույր: | Պահպանված չէ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագու անդամը չի կարող միաժամանկ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում: | Առաջարկվում է համայնքի ավագանու անդամ Մանուշ Հովհաննիսյանի լիազորությունները <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցնել ՝ որպես ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոնի զբաղեցում: | Կատարված աշխատանքների մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել մարզպետարան |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 29. Համայնքի ավագանու անդամի ավագանու նիստերին պարտադիր մասնակցություն: | V | | | | | | |
| 30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | V | | | | | | |
| 31. Համայնքի ավագանու անդամի իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին առնչվող որոշումների քվեարկությանը մասնակցության բացառումը: | V | | | | | | |
| 32. Համայնքի ավագանու անդամի իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերում ստորագրության առկայություն: | V | | | | | | |
| 33. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով կանոնադրության հաստատման առկայություն: | Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանում չկա: | | | | | | |

II.Համայնքի ղեկավարի գործառույթը՝ օրենքով սահմանված պահանջների համաձայն

1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:
2. Համայնքի ղեկավարը իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:
3. Համայնքի ղեկավարը ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում: Համայնքի նոր ղեկավարի ընտրվելուց հետո հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք իրենց լիազորությունները վայր են դնում: Համայնքի ղեկավարը աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:
4. Համայնքի ղեկավարը իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին:
5. Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով՝
1) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում.
2) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.
3) համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
4) համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.
6) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.
7) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող գույքը.
8) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ.

9) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, նրբանցքները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).
10) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը.
11) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.
12) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով միջոցներ է ձեռնարկում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար.
13) կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը.
14) կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է միջոցներ.
15) սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.
16) միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.
17) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

6. Համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:

7. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:

8. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| *Դրույթների անվանումը* | *Պահպանված է* | *Թերի է պահպանված* | *Պահպանված չէ* | *Հայտնաբերված խախտումները* | *Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ* | *Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները* |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Համայնքում առնվազն երկու հազար բնակչի համար համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար մատչելի տեղերում հայտարարություն փակցնելու միջոցով ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարի կողմից հրապարակված տեղեկության առկայություն՝ ավագանու նիստի ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ: | V | | | | | |
| 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները և աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստա-տելու մասին համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Օրենքով սահմանված կարգով հայեցողական պաշտոններում նշանակումներ կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում նման գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 4. Համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարների նշանակման վերաբերյալ համայնքի ավագանու անդամների համաձայնության առկայություն: | V | | | | | |
| 5. Համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ուղարկելու ավագանուն անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղերում համայնքի ղեկավարի նորմատիվ ակտերի փակցված լինելու առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից նորմատիվ իրավական ակտեր չեն ընդունվել: | | | | | |
| 6. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն: | V | | | | | |
| 7. Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման գործառույթ տեղի չի ունեցել: | | | | | |
| 8. Ավագանու հաստատմանը ներկայացված համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ ներկայացված լինելու առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | V | | | | | |
| 10. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | V | | | | | |
| 11. Օրենքով սահմանված կարգով օտարված կամ օգտագործման տրամադրված համայնքի սեփականություն համարվող գույքի վերաբերյալ ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) է ներկայացված լինելու առկայությունը: | Գործառույթ չի իրականացվել | | | | | |
| 13. Համայնքի ղեկավարի որոշման առկայություն համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14. Համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայություն, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցման ներկայացնելու առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 15. Շենքերի և շինությունների համարակալման սահմանման վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի որոշման առկայություն: | V | | | | | |
| 16.Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում: | V | | | | | |
| 17. Քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար օրենքով սահմանված կարգով միջոցների ձեռնարկում: | V | | | | | |
| 18. Օրենքով սահմանված կարգով համայնքի բնակիչների հաշվառման իրականացում: | V | | | | | |
| 19. Օրենքով սահմանված կարգով քաղաքացիների ընդունելության կազմակերպում: | V | | | | | |
| 20. Համայնքում խնամակալության և հոգաբարձության մարմինների օրենքով սահմանված կարգով ձևավորման առկայություն: | V | | | | | |
| 21. Համայնքում երեխաների ծնունդների չգրանցման բացառման, իսկ հայտնաբերման դեպքում օենքով սահմանված կարգով գրանցման ուղղությամբ իրականացված աշխատանքներ: | Ծնունդների չգրանցման դեպքեր չեն արձանագրվել: | | | | | |
| 22. Օրենքով սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ իրականացնելու համար կատրված աշխատանքների առկայություն: | | | | | | |
| 23. Ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 24. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն: | | | V Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում չի կատարել համապատասխա ն փոփոխություններ և չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը առաջիկա նիստում: | Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի երրորդ մասի պահանջները՝ համաձայն որի սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատաս խան փոփոխություններ և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը առաջիկա նիստում: | Այսուհետ համապատասխան փոփոխության դեպքում սահմանված կարգով իրականացնել գույքագրման փաստաթղթերի վարման ճիշտ ընթացակարգը: | |

III. Համայնքի ղեկավարի օրենքով սահմանված այլ գործառույթը՝

1. Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, որը ներկայացնում է նորընտիր ավագանու հաստատմանը՝ վերջինիս լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում։ Եթե համայնքի նորընտիր ղեկավարի լիազորություններ ստանձնելու ժամկետը համընկնում է նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետին, ապա համայնքի նորընտիր ղեկավարը քառամյա ծրագիրը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում կամ ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում կամ իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում։

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ։

2. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ)։

3. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում։ Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն։

4. Համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն։

5. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում։ Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ։ Եթե պետական բյուջեն ընդունելիս ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվում են, ապա համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում ավագանու հաստատմանն է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները։

6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար համայնքն օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ։

Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ։ Եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքի բյուջետային հիմնարկները, ապա գանձված գումարն ուղղվում է համայնքի բյուջե։

7. Համայնքի ղեկավարը բյուջեի հիման վրա ճշտում է աշխատակազմի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և բյուջետային հիմնարկների խնդիրները, հաստատում է դրանց դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանները։

8. Համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, ապահովում է բյուջեի կատարումը, պարտադիր կարգով ստորագրում է բոլոր ֆինանսական փաստաթղթերը և անձնական պատասխանատվություն է կրում ֆինանսական գործառնությունները ճշգրիտ ու օրենքին համապատասխան կատարելու համար։

9. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը։

10. Համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

2) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

3) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.

4) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

5) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը։

11. Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների ներառում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն։

12. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխումն ըստ տարվա ամիսների։

13. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունների հաշվի առումով։

14. Համայնքներին <<Ֆինանսական համահարթեցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող ելակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային թվերին)։

15. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում պատճառների բացահայտում և համապատասխան միջոցների ձեռնարկում:

16. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:

17.Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Օրենքով սահմանված կարգով համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի ավագանուն ներկայացված լինելու առկայություն: | √ | | | | | |
| 2. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն: | | | Պահպանված չէ ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի պահանջները:Համաձայն որի Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): | Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը ապահովվելու համար, չի ձևավորվել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին | Առաջնորդվել ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի պահանջներով: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ | Կատարված աշխատանքների մասին 20 օրվա ընթացքում տեղեկացնել մարզպետարանին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 4. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 5. ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում համայնքի բյուջեի նախագիծը առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ կատարված աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | V | | | | | |
| 7. ՀՀ պետական բյուջեի հիման վրա ճշտված դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանների հաստատված լինելու առկայություն: | √ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: | | | 1. Պահպանված չէ ՀՀ կառավարության 29.05.2003թ N750-Ն որոշման հավելված 1-ի 10-րդ կետի բ ենթակետի պահանջները:<br><br>2. Պահպանված չէ <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները | Համակարգողը անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարները առանձնացնելով սահմանված ժամկետում /3օր/ դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով սահմանված կարգով չի մուտքագրել տվյալ համայնքի սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի համապատասխան գանձապետական հաշվին:<br><br>**2**Հաշվապահական հաշվառման գրանցումները չեն կատարվել սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա,որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարման փաստը; | 1.Խստորեն պահպանել ՀՀ կառավարության 29.05.2003թ N 750-Ն որոշման պահանջները<br><br>2.Խստորեն պահպանել<<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները | |
| 9. Օրենքով սահմանված ժամկետում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայությունը: | √ | | | | | |
| 10. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացնելու առկայություն: | √ | | | | | |
| 11. Համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:. | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12. տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման առկայություն: | V | | | | | |
| 13. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն: | V | | | | | |
| 14. Համայնքի բյուջեի միջոցների տնօրինման և նպատակային օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: | v | | | | | |
| 15. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների ներառում: | | √ | | Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից՝ հողի հարկի և գույքահարկի մասով նախատեսված գումարներ չ են ներառվել | Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ գումարներ ներառել ապառքներից հողի հարկի և գույքահարկի մասով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների | Կատարված աշխատանքների մասին 30 օրվա ընթացքում տեղեկացնել մարզպետարանին |
| 16. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխման առկայություն՝ ըստ ամիսների: | √ | | | | | |
| 17. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունների ընդունում: | √ | | | | | |
| 18. <<Ֆինանսական համահարթեցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող ելակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային թվերին) համապատասխան: | √ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 19. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում պատճառների բացահայտում և ձեռնարկված միջոցների իրականացում: | √ | | | | | | |
| 20. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում: | √ | | | Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները,այն է մեկ գնման առարկան բաժանվել է առանձին չափաբաժինների, մրցակցային ձևի կիրառումից խուսափելու նպատակով: Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները,այն է , որ գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: | Այսուհետ խստորեն պահպանել<<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և 15-րդ հոդվածի պահանջները; Առաջնորդվել գնման ընթացակարգի և գնումների իրականացման վերաբերյալ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: | |

*Հավելված 1*
*Հաստատված է*
*ՀՀ տարածքային կառավարման և*
*արտակարգ իրավիճակների նախարարի*
*2015 թվականի օգոստոսի 27-ի*
*թիվ 860-Ն հրամանով*

*«Հավելված*
*Հաստատված է*
*ՀՀ փոխվարչապետ,*
*տարածքային կառավարման*
*նախարարի 2014 թվականի*
*մարտի 3-ի թիվ 11-Ն հրամանով*

*Վարչական Հսկողության Հարցաշար*
*Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող*

I Համայնքի ավագանու գործառույթը՝

1.Համայնքի ավագանին Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք /այսուհետ ՏԻՄ/ օրենքով սահմանված կարգով՝

1) ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան.
2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը.
3) հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
4) որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարիներկայացմամբ.
5) որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.
6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.
7) իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին.
8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս.
9) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
10) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.
11) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:
12) որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ.
13) իր որոշմամբ վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու մասին պայմանագրերը: Համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարները մուծելու մասին.
14) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները,
աշխատակիցների քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ;
15) Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին: Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված և (կամ) լրացված է համարվում Հայաստանի Հանրապետության

կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

16) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

17) հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը.

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.

19) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

20) քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում.

21) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

22) քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ:

23) Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: ՏԻՄ օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:

24) Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:

25) Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարն ու ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տաս օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

26) Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

ա) աշխատել նույն աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմնարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար.

բ) լինել համայնքի ղեկավար.

գ) աշխատել իրավապահ, պետական անվտանգության և դատական մարմիններում:

դ) Օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև զինված ուժերում ծառայելու կամ ծառայության անցնելու դեպքերում համայնքի ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

27) Համայնքի ավագանու անդամը օրենքով սահմանված կարգով պարտավոր է՝

ա. Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

բ. մասնակցել ավագանու նիստերին.

գ. պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.

դ. մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.

ե. ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

զ. օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.

է. չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին.

ը. անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին.

թ. ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:

28) Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է համայնքի ավագանին:

29)Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի առկայություն: | V | | | | | |
| 3. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի բյուջեի առկայություն: | V | | | | | |
| 4. Համայնքի բյուջեի փոփոխությունների դեպքում համայնքի ավագանու կողմից հաստատման առկայություն: | V | | | | | |
| 5. Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն: | V | | | | | |
| 6. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր խնդիրների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 7. Համայնքի ղեկավարի վարձատրության չափի վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 8. Համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածու մ համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ ի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման գործընթաց տեղի չի ունեցել: | | | | | |
| 9. Համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 10. Համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 11. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 12. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու դեպքում օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանու որոշման առկայություն, որում նշված է օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում օգտագործման ժամկետը և վճարի չափը, օրենքով սահմանված կարգով ուղղակի վաճառքի դեպքում վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում մեկնարկային գինը, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օրենքով սահմանված կարգով օտարելու դեպքում նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը: | V | | | | | |
| 14. Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 15. Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցության դեպքում իր որոշմամբ համագործակցության պայմանագրերի վավերացում: | Համագործակցությու ն չի իրականացվել: | | | | | |
| 16. Համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու դեպքում անդամակցության և դրանց անդամության օրենքով սահմանված կարգով վճարները մուծելու մասին որոշման առկայություն: | Անդամակցություն չի իրականացվել | | | | | |
| 17. Աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (ՏԻՄ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան) հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 18. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին համայնքի ավագանու որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվա ծում գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 19. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | | | | |
| 20. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 21. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 22. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 23. Իր իրավասության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքներ վերաբերյալ որոշման առկայություն. | V | | | | | |
| 24. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 25. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | V | | | | | |
| 26. Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն: | V | | | | | |
| 27. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն: | V | | | | | |
| 28. Համայնքի ավագանու անդամի նկատմամբ օրենքով նախատեսված այլ անհամատեղելի պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ սահմանափակումների պահպանում: | V | | V<br>Համայնքի ավագնու անդամ Մանուշ Լենդրուշի Հովհաննիսյանը աշխատում է <<Գեղակերտի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ում որպես բուժքույր: | Պահպանված չէ<br><<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագու անդամը չի կարող միաժամանկ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում: | Առաջարկվում է համայնքի ավագանու անդամ Մանուշ Հովհաննիսյանի լիազորությունները <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցնել՝ որպես ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոնի զբաղեցում: | Կատարված աշխատանքների մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել մարզպետարան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 29. Համայնքի ավագանու անդամի ավագանու նիստերին պարտադիր մասնակցություն: | V | | | | | |
| 30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | V | | | | | |
| 31. Համայնքի ավագանու անդամի իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին առնչվող որոշումների քվեարկությանը մասնակցության բացառումը: | V | | | | | |
| 32. Համայնքի ավագանու անդամի իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերում ստորագրության առկայություն: | V | | | | | |
| 33. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով կանոնադրության հաստատման առկայություն: | Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանում չկա: | | | | | |

II.Համայնքի ղեկավարի գործառույթը՝ օրենքով սահմանված պահանջների համաձայն

1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:
2. Համայնքի ղեկավարը իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:
3. Համայնքի ղեկավարը ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում: Համայնքի նոր ղեկավարի ընտրվելուց հետո հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք իրենց լիազորությունները վայր են դնում: Համայնքի ղեկավարը աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:
4. Համայնքի ղեկավարը իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին:
5. Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով՝
1) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում.
2) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.
3) համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
4) համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.
6) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.
7) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող գույքը.
8) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ.

9) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

10) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը.

11) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.

12) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով միջոցներ է ձեռնարկում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար.

13) կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը.

14) կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է միջոցներ.

15) սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.

16) միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.

17) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

6. Համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:

7. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:

8. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Համայնքում առնվազն երկու հազար բնակչի համար համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար մատչելի տեղերում հայտարարություն փակցնելու միջոցով ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարի կողմից հրապարակված տեղեկության առկայություն՝ ավագանու նիստի ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ: | V | | | | | |
| 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները և աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Օրենքով սահմանված կարգով հայեցողական պաշտոններում նշանակումներ կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշման առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում նման գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 4. Համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարների նշանակման վերաբերյալ համայնքի ավագանու անդամների համաձայնության առկայություն: | V | | | | | |
| 5. Համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ուղարկելու ավագանուն անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղերում համայնքի ղեկավարի նորմատիվ ակտերի փակցված լինելու առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից նորմատիվ իրավական ակտեր չեն ընդունվել: | | | | | |
| 6. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն: | V | | | | | |
| 7. Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայություն: | Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման գործառույթ տեղի չի ունեցել: | | | | | |
| 8. Ավագանու հաստատմանը ներկայացված համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ ներկայացված լինելու առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | V | | | | | |
| 10. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | V | | | | | |
| 11. Օրենքով սահմանված կարգով օտարված կամ օգտագործման տրամադրված համայնքի սեփականություն համարվող գույքի վերաբերյալ ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) է ներկայացված լինելու առկայությունը: | Գործառույթ չի իրականացվել | | | | | |
| 13. Համայնքի ղեկավարի որոշման առկայություն համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14. Համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայություն, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցման ներկայացնելու առկայություն: | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |
| 15. Շենքերի և շինությունների համարակալման սահմանման վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի որոշման առկայություն: | V | | | | | |
| 16.Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում: | V | | | | | |
| 17. Քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար օրենքով սահմանված կարգով միջոցների ձեռնարկում: | V | | | | | |
| 18. Օրենքով սահմանված կարգով համայնքի բնակիչների հաշվառման իրականացում: | V | | | | | |
| 19. Օրենքով սահմանված կարգով քաղաքացիների ընդունելության կազմակերպում: | V | | | | | |
| 20. Համայնքում խնամակալության և հոգաբարձության մարմինների օրենքով սահմանված կարգով ձևավորման առկայություն: | V | | | | | |
| 21. Համայնքում երեխաների ծնունդների չգրանցման բացառման, իսկ հայտնաբերման դեպքում օենքով սահմանված կարգով գրանցման ուղղությամբ իրականացված աշխատանքներ: | Ծնունդների չգրանցման դեպքեր չեն արձանագրվել: | | | | | |
| 22. Օրենքով սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և | Գործառույթ չի իրականացվել: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ իրականացնելու համար կատրված աշխատանքների առկայություն: | | | | | | |
| 23. Ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | V | | | | | |
| 24. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն: | | | V<br>Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում չի կատարել համապատասխան փոփոխություններ և չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը առաջիկա նիստում: | Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի երրորդ մասի պահանջները՝ համաձայն որի սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը առաջիկա նիստում: | Այսուհետ համապատասխան փոփոխության դեպքում սահմանված կարգով իրականացնել գույքագրման փաստաթղթերի վարման ճիշտ ընթացակարգը: | |

III. Համայնքի ղեկավարի օրենքով սահմանված այլ գործառույթը՝

1. Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, որը ներկայացնում է նորընտիր ավագանու հաստատմանը՝ վերջինիս լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում: Եթե համայնքի նորընտիր ղեկավարի լիազորություններ ստանձնելու ժամկետը համընկնում է նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետին, ապա համայնքի նորընտիր ղեկավարը քառամյա ծրագիրը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում կամ ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում կամ իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ:

2. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

3. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

4. Համայնքի ղեկավարը  կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն:

5. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Եթե պետական բյուջեն ընդունելիս ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվում են, ապա համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում ավագանու հաստատմանն է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները:

6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար համայնքն օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ:

Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ: Եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքի բյուջետային հիմնարկները, ապա գանձված գումարն ուղղվում է համայնքի բյուջե:

7. Համայնքի ղեկավարը բյուջեի հիման վրա ճշտում է  աշխատակազմի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և բյուջետային հիմնարկների խնդիրները, հաստատում է դրանց դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանները:

8. Համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, ապահովում է բյուջեի կատարումը, պարտադիր կարգով ստորագրում է բոլոր ֆինանսական փաստաթղթերը և անձնական պատասխանատվություն է կրում ֆինանսական գործառնությունները ճշգրիտ ու օրենքին համապատասխան կատարելու համար:

9. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

10. Համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

2) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

3) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.

4) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

5) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը:

11. Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների  ներառում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն:

12. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխումն ըստ տարվա ամիսների:

13. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունների հաշվի առնում:

14. Համայնքներին <<Ֆինանսական համահարթեցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող ելակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային թվերին):

15. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում՝ պատճառների բացահայտում և համապատասխան միջոցների ձեռնարկում:

16. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:

17.Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Օրենքով սահմանված կարգով համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի ավագանուն ներկայացված լինելու առկայություն: | √ | | | | | |
| 2. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն: | | | Պահպանված չէ ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի պահանջները:Համաձայն որի Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): | Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը ապահովվելու համար, չի ձևավորվել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին | Առաջնորդվել ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի պահանջներով: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ | Կատարված աշխատանքների մասին 20 օրվա ընթացքում տեղեկացնել մարզպետարանին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 4. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 5. ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում համայնքի բյուջեի նախագիծը առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ կատարված աշխատանքների առկայություն: | √ | | | | | |
| 6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | V | | | | | |
| 7. ՀՀ պետական բյուջեի հիման վրա ճշտված դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանների հաստատված լինելու առկայություն: | √ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: | | | 1. Պահպանված չէ ՀՀ կառավարության 29.05.2003թ N750-Ն որոշման հավելված 1-ի 10-րդ կետի բ ենթակետի պահանջները:<br><br>2. Պահպանված չէ <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները | Համակարգողը անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարները առանձնացնելով սահմանված ժամկետում /3օր/ դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով սահմանված կարգով չի մուտքագրել տվյալ համայնքի սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի համապատասխան գանձապետական հաշվին:<br><br>2Հաշվապահական հաշվառման գրանցումները չեն կատարվել սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա,որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարման փաստը; | 1.Խստորեն պահպանել ՀՀ կառավարության 29.05.2003թ N 750-Ն որոշման պահանջները<br><br>2.Խստորեն պահպանել<<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները | |
| 9. Օրենքով սահմանված ժամկետում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայությունը: | √ | | | | | |
| 10. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացնելու առկայություն: | √ | | | | | |
| 11. Համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:. | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12. տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման առկայություն: | V | | | | | |
| 13. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն: | V | | | | | |
| 14. Համայնքի բյուջեի միջոցների տնօրինման և նպատակային օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: | v | | | | | |
| 15. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների ներառում: | | √ | | Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից՝ հողի հարկի և գույքահարկի մասով նախատեսված գումարներ չ են ներառվել | Համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ գումարներ ներառել ապառքներից հողի հարկի և գույքահարկի մասով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների | Կատարված աշխատանքների մասին 30 օրվա ընթացքում տեղեկացնել մարզպետարանին |
| 16. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխման առկայություն՝ ըստ ամիսների: | √ | | | | | |
| 17. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունների ընդունում: | √ | | | | | |
| 18. <<Ֆինանսական համահարթեցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող նյակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային թվերին) համապատասխան: | √ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 19. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում՝ պատճառների բացահայտում և ձեռնարկված միջոցների իրականացում: | √ | | | | | |
| 20. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում: | √ | | | Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները,այն է մեկ գնման առարկան բաժանվել է առանձին չափաբաժինների, մրցակցային ձևի կիրառումից խուսափելու նպատակով: Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները,այն է , որ գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: | Այսուհետ խստորեն պահպանել<<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և 15-րդ հոդվածի պահանջները; Առաջնորդվել գնման ընթացակարգի և գնումների իրականացման վերաբերյալ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Մ Ա Տ Ե Ղ   Հ Ր Ա Մ Ա Ն

«19» դեկտեմբերի 2013թ. N 12-Ն

«04»դեկտեմբերի 2013թ. N 371-Ն

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ.

1. Հաստատել քաղաքաշինության բնագավառում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

______________Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

______________Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

NAX.doc

*Հավելված 2*

*Հաստատված է*

*ՀՀ փոխվարչապետ, տարածքային*

*կառավարման նախարարի*

*2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 12-Ն*

*և ՀՀ քաղաքաշինության նախարարի*

*2013 թվականի դեկտեմբերի 4 –ի թիվ 371-Ն համատեղ հրամանով*

## *Գեղակերտ գյուղական համայնք*
## *Վարչական Հսկողության Հարցաշար*
## *Քաղաքաշինության բնագավառ*

1. Գործառույթը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ ՏԻՄ/ 37-րդ հոդված, կետ 1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:
2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն և ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 11-ի N 408 որոշումներ:

| 28. Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 29. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 30. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝<br>1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,<br>2) ընդհանուր օգտագործման տարածքները (զբոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր)՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,<br>3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 31. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 32. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝<br>1) մինչև 20 քառ. մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.<br>2) տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով.<br>3) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.<br>4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար.<br>5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.<br>6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս.<br>7) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետի ներկայացմամբ: | | | | | | |
| 33. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքների ղեկավարների կողմից ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 34. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 35. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ: Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից: Մրցույթի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք: Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի (վճարի) չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 36. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը և (կամ) հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու (կառուցապատման իրավունք ձեռք բերելու) իրավունքից: Եթե կրկնամրցույթը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցույթի 10-օրյա ժամկետում տրամադրվել առաջին հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցույթ հայտարարելով: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 37. Հողամասերը մրցույթներով տրամադրելու համար վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանվում է համայնքի ղեկավարի կողմից, որը չպետք է պակաս լինի տվյալ հողամասի համար սահմանված հողի հարկի տարեկան դրույքաչափից: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 38. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 39. Հողային հաշվեկշիռը հողերի ընթացիկ հաշվառման հիման վրա կազմվող յուրաքանչյուր տարվա հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունն է: | **V** | | | | | |
| 40. Հողային հաշվեկշիռը բաղկացած է տեքստից և աղյուսակներից: Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ: | **V** | | | | | |
| 41. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝<br>1) հողի սեփականության ձևի,<br>2) հողի օգտագործման ձևի,<br>3) հողի նպատակային նշանակության,<br>4) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության, | | | | **Համայնքի կողմից համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջների չի իրականացվել գործառույթ քաղաքացիների սեփական հողերը 15-օրյա** | **Առաջարկվում է առաջնորդվելով ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով իրականացնել հողի ետ վերադարձման գործընթացը:** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5) հողերի ոռոգման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,<br>6) ոռոգելի, անջրդի, անօգտագործելի և չորացված հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիա),<br>7) նոր անտառատնկումների և անտառահատումների,<br>8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրման տվյալների: | | | | ժամկետում նրանց դիմումների համաձայն եւ վերադարձնել որպես համայնքային սեփականություն: Խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածն: Համայնքապետարանի կողմից չի կանխվել քաղաքացու կողմից հողազավթման և հողի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը: Խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջները: | Օրենքով սահմանված կարգով կասեցնել քաղաքացու կողմից ոչ նպատակային նշանակության հողօգտագործումը: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջների: | |
| 42. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմում է հողերի պետական հաշվառման տվյալ տարվա ընթացիկ տվյալների հիման վրա՝ հոլիսի 1-ի դրությամբ: | V | | | | | |
| 43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ | | | | | | |
| 44. Ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևանի քաղաքապետի): | V | | | | | |
| 45. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները: | V | | | | | |
| 46. Համայնքի վարչական սահմաններում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանություն: | V | | | | | |
| 47. Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանության ենթակա են՝<br>1) պետական գեոդեզիական ցանցի կետերը՝<br>ա) պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, արտաքին նշանները, կողմնորոշիչ կետերը.<br>բ) պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցի կետերը, հիմնային, գրունտային, ժայռային, պատային հենանշանները (ռեպերները) և մակնիշները.<br>2) գրավիմետրիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, ուղեկից կետերը և ստուգողական հենանշանները.<br>3) հատուկ գեոդեզիական ցանցերի կետերը՝ դրանց արտաքին նշանները, | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| կենտրոնները, ստուգողական մակնիշները: | | | | | | |
| 48. Հողամասերը, որոնց վրա տեղակայված են գեոդեզիական կետերը, համարվում են գեոդեզիական կետերի պահպանման և սպասարկման գոտիներ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ կետին և 50-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ ենթակա են գրանցման որպես սերվիտուտ: | V | | | | | |
| 49. Շենքերի պատերին, շինությունների վրա և նման տեղերում տեղադրված գեոդեզիական կետերի համար սահմաններ չեն որոշվում: Այդ դեպքում պահպանման ենթակա է անմիջապես կետը, պատային նշանը կամ հենանշանը (ռեպերը): | V | | | | | |
| 50. Համաձայն «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ գեոդեզիական կետերի պահպանության ապահովումը համայնքի վարչական սահմաններում իրականացնում է համայնքի ղեկավարը: | V | | | | | |
| 51. Պահպանության են հանձնվում բոլոր նոր տեղադրված և նախկինում պահպանության չհանձնված տեղագրագեոդեզիական աշխատանքների կատարման ժամանակ հետազոտված ու վերականգնված գեոդեզիական կետերը: | V | | | | | |
| 52. Գեոդեզիական կետերի պահպանության հանձնումը ձևակերպվում է սահմանված ակտով (ձև N 2): Ակտը կազմվում է 2 օրինակից՝ գեոդեզիական կետերը պահպանության հանձնվող կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով, | V | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| եթե կազմակերպությունը կնիք ունի: Ակտին կցվում է գեոդեզիական կետերի ցանկը՝ տեղադիրքի նկարագրությամբ: | | | | | | |
| 53. Գեոդեզիական կետերը պահպանության հանձնելու մասին ակտի առաջին օրինակը մնում է աշխատանքը կատարած կազմակերպությունում՝ հետագայում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հանձնելու համար, իսկ երկրորդը՝ համայնքի ղեկավարի մոտ: | V | | | | | |
| 54. Մի հողօգտագործողից մյուսին հողամասերի նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքում նախկինում պահպանության ընդունված գեոդեզիական կետերը հանձնման ակտով փոխանցվում են նոր հողօգտագործողին: Հանձնող կողմը կետերի հանձնման ակտի մի օրինակն ուղարկում է կադաստրի պետական կոմիտե: | V | | | | | |
| 55. Գեոդեզիական կետերի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացվում է կադաստրի պետական կոմիտեի կողմից: | V | | | | | |
| 56. Պետական գեոդեզիական ցանցի կետերը քանդվում կամ տեղափոխվում են միայն կադաստրի պետական կոմիտեի համաձայնության դեպքում: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 57. Գեոդեզիական կետերի (կենտրոնների, արտաքին նշանների, ռեպերների, կողմնորոշիչ կետերի) ոչնչացում կամ վնասում հայտնաբերվելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից կազմվում է ակտ, որտեղ նշվում են վնասվածության բնույթը, ինչպես նաև վնասման կամ ոչնչացման պատճառները: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 58. Գեոդեզիական կետերի ոչնչացման կամ վնասվածության մասին ակտը կազմվում է 2 օրինակից: Առաջին օրինակն ուղարկվում է կադաստրի պետական կոմիտե, երկրորդը մնում է համայնքում: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |
| 59. Գեոդեզիական կետերի միտումնավոր ոչնչացման կամ վնասման դեպքում ակտի պատճենը փոխանցվում է իրավապահ մարմիններին՝ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար: | **Գործառույթ չի իրականացվել** | | | | | |

Գյուղ Գեղակերտ

***ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ***
***ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***(ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 2015-ից 2018 թվականը)***

1. Ուսումնասիրության ողջ ժամանակահատվածում համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում 26 983 453 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով համայնքի գույքացանկում հաշվառված է դպրոցի շենքը, մինչդեռ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N26122016-04-0037 վկայականի համաձայն՝ գրանցված իրավունքի սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է:

2. Համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի N10-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը, համաձայն որի՝ մատուցվող ծառայության մեջ ընդգրկված է նաև համայնքի բնակիչ համարվող անձանց կտակների վավերացումը՝ նախատեսելով 5000 ՀՀ դրամ վճար, մինչդեռ՝ 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած <<<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն կտակի վավերացման պայման նախատեսված չէ:

3. Համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 7-ի N17 որոշմամբ իրականացվել է հողի հարկի նկատմամբ հաշվարկված տույժերի զիջում՝ ընդհանուրը՝ 109 465 ՀՀ դրամ, որի հիմքում չկա ոչ համապատասխան ոլորտը կարգավորող հանձնաժողովի, ոչ էլ ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հարկային արտոնություն տալու համայնքի ղեկավարի անհրաժեշտության հիմնավորումը:

4. Համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 7-ի N19 որոշմամբ 250 000 ՀՀ դրամ գումար է հատկացվել <<Արմավիրի մշակույթ, սպորտ, երիտասարդություն>> հիմնադրամին, որում հիմք է ընդունվել համայնքի ավագանու կողմից ստեղծված սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը, սակայն նշված հանձնաժողովի արձանագրությունների գրանցամատյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2018 թվականի մարտի 7-ի թվագրմամբ արձանագրություն արձանագրված չէ: Այս առումով հատկանշական է նաև այն փաստը, որ նշված որոշման մեջ հիմք է ընդունվել նաև <<Արմավիրի մշակույթ, սպորտ, երիտասարդություն>> հիմնադրամի 2018 թվականի գրությունը, որը թվագրված է մարտի 15-ով, մինչդեռ՝ որոշումը մարտի 7-ի ամսաթվով է, այսինքն գրությունը մուտքագրվել է համայնքապետարան որոշումն ընդունելուց հետո միայն:

5. Համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 18-ի N30 որոշմամբ Արմինե Համբարձումյանի համար <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թեկնածությունն է հավանության արժանացել, որից հետո համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի ապրիլի 25-ին չորս ամիս ժամկետով կնքվել է աշխատանքային պայմանագիր: Արմինե Համբարձումյանի անձնական գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ նա չունի աշխատանքնային ստաժ, մինչդեռ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N416-Ն հրամանով հաստատված կարգի 2-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:***

6. Համայնքում 2018 թվականին իրականացվել է էքսկավատորի և տնակի աճուրդ վաճառք: Չնայած այն հանգամանքին, որ այն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, այնուամենայնիվ՝ <<Էքսպերտ>> ՍՊԸ-ի կողմից գնահատման արդյունքում տրված եզրակացության և գնահատման ակտի մեջ կան ժամկետների խախտումներ, մասնվորապես՝ եզրակացությունը կազմվել է 2017 թվակականի նոյեմբերի 27-ին, իսկ դրանում նշված տեքստում պատվիրատու համայնքի ղեկավարի հետ կնքվել է պայմանագիր 2017 թվականի դեկտեմբերի 15-ին, իսկ գնահատման N71116-1 ակտում, որը կազմվել է 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, գնահատման ներկայացված ЭО2621 մակնիշի էքսկավատորը գնահատվել է 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

***(հողօգտագործման բնագավառ)***

16.08.2018թ.

Գեղակերտ համայնքի վարչական տարածքը կազմում է 659,1հա,որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 395.6 հա, համայնքային սեփականության հողեր՝ 3.6հա, քաղաքացիների սեփականության հողեր՝ 379,6հա, իրավաբանական անձանց հողեր՝ 12,4հա:

Համայնքում 30.11.2017թ-ին՝ աճուրդային կարգով օտարվել է 0,215հա արտադրական նշանակության տարածք: Առք ու վաճառքի պայմանագիրը կնքվել է27.12.2017թ-ին, պետական գրանցում և սեփականության իրավունքի վկայական առկա է:

_ Համայնքային սեփականության 2-րդ կարգի 3,6հա վարելահող սկսած 90-ական թվականներից պահանջ չլինելու և ոռոգման խնդիրների պատճառով չի մշակվում:

_Համայնքի հողասեփականատերերից երեքը հրաժարվել են հողի սեփականությունից, նրանցից՝ Բուդաղյան Թամարան ներկայացրել է դիմում և 0,22հա 2-րդ կարգի վարելահողի սեփականության վկայական: Մյուս երկու հողատերերը հրաժարվել են բանավոր հայտարարությամբ՝ Փիլիպոսյան Գրիգորը 0,33 հա և Սեդրակյան Հռիփսիկը 0,167հա վարելահողեր:

_ Համայնքի ղեկավարի մեկնաբանությամբ՝ նշված տարածքները իր կողմից տրամադրվում են այլ հողօգտագործողների, որոնք էլ վճարում են հողի սեփականատերերի հարկային պարտավորությունները, նշված հողատերերը բացակայում են հանրապետությունից: Խախտվել է ՀՀ Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջները՝ այն է՝ 15-օրյա ժամկետում քննարկել ավագանու հետ և ճանաչել համայնքային սեփականության հողեր:

_Համայնքի վարչական տարածքում առկա է 2,0989 հա ,,Գործիքագործական,, գործարանի տարածք, որը ՀՀ կառավարության 24.12.2003թ-ի թիվ-1823-Ն որոշմամբ տրվել է համայնքային սեփականություն և չի օգտագործվում: Նշված գործարանի տարածքից 1000ք/մ հողազավթվել է գյուղի բնակիչ՝ Ծաղիկ Մկրտչյանի կողմից և կատարվել մաքրման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարը առանց համապատասխան հողհատկացման ժամանակավորապես տրամադրել է նշված անձանց օգտագործման:

_ Գործարանի սահմանակից հարևանների կողմից իրականացվել է 0,4 հա գործարանի արտադրական տարածքի ինքնակամ մաքրեւմ՝մշակության նպատակով: Ներկայումս համայնքապետարանի կողմից նշված գործընթացը դադարեցվել է ևհողատարածքը տնօրինում է համայնքապետարանը:

Խախտվել է ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջները:

*ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ*

***(քաղաքաշինության բնագավառ)***

**Քաղաքաշինության բնագավառում 2015-2018թթ..իրականացվել է՝**

1. Գեղակերտ համայնքի մանկապարտեզի վերանորոգում
2. Գեղակերտ համայնքի մշակույթի տան վերանորոգում

Նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակել է ,,Նշան և որդիներ,, ՍՊԸ:

Առկա են նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Վերը նշված օբյեկտների համար գնումների գործընթաց չի իրականացվել:

Վերանորոգման շինարարական աշխատանքների համար չի հայտարարվել մրցույթ և աշխատանքները կատարվում են սեփական ուժերով:

Տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

Հետևաբար առկա չեն համապատասխան կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը և պայմանագրերի հավելվածները /ծավալաթերթ նախահաշիվները/, ինչպես նաև կատարողական ակտերի փաթեթները՝ համապատասխան ծավալներով:

Վերը նշված գործունեությունը հանդիսանում է ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման և ՀՀ գնումների մասին օրենքի խախտում:

Ներկա պահին ընթանում են վերանորոգման աշխատանքներ մշակույթի տանը:

***Տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ/ֆինանսների բնագավառ/***

ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի 2018թ տարեկան բյուջեն կազմում է 88 555 100 ՀՀ դրամ, պետական բյուջեից հատկացվող դոտացիան կազմում է 45464600 ՀՀ դրամ, 01.01.2018թ դրությամբ հողի հարկի ապառքները կազմում են 37135912 ՀՀ դրամ,գույքահարկի ապառքները կազմում են 6 014 887 ՀՀ դրամ:

1. 2015-2018թթ. ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ համայքապետարանում գույքահարկի համար գանձված գումարները պարբերաբար ժամանակին չեն մուտքագրվել համապատասխան բանկային հաշվին: Մասնավորապես 2015թ նոյեմբեր-դեկտեմբերին գանձված գույքահարկի 886 422 ՀՀ դրամը բանկային հաշվին մուտքագրվել է 2017թ հունվարին:2016թ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հավաքագրված 1 010 361 ՀՀ դրամը բանկային հաշվին է մուտքագրվել 2017թ հունվարին: 2017թ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հավաքագրված 1 446 720 ՀՀ դրամը բանկային հաշվին մուքագրվել է 2018թ հունվարին:Խախտվել է ՀՀ կառավարության 29.05.2003թ N 750-Ն որոշման ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման և վճարումների ընդունման կարգի 10-րդ կետի բ ենթակետի պահանջը, այն է, որ համակարգողը անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքը սպասարկող գանձապետական բաժանմունքի համապատասխան գանձապետական հաշվին՝ գյուղական համայնքներում /մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված/վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 5-15 կմ հեռավորրության դեպքում 3 օրվա ընթացքում: Ուսումնասիրրություններից պարզվել է,որ համայնքի ղեկավարի կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողակտորների հողի հարկի պարտքերը 14.08.2018թ դրությամբ կազմում են 859 910 ՀՀ դրամ: Մինչդեռ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետով համայնքի ղեկավարն է օրենքով սահմանված կարգով կազմակերպում տեղական հարկերի, տուրքերի և վճարների,համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

2. 2015-2018թթ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել են, որ համայնքապետարանի կողմից իրականացվել են չհիմնավորված ծախսեր կապված տրանսպորտային նյութերի՝ բենզինի և դիզելային վառելիքի ծախսերի հետ: Մասնավորապես համայքապետարանին պատկանող Nissan մակնիշի մեքենայի համար բենզինի ծախսի՝ ավագանու նիստով հաստատված օրեկան 12լ ծախսի երթուղային թերթիկների լրացումներ չկան,ինչպես նաև համայնքի կարիքների համար ծախսված դիզելային վառելիքի համար չկան համայնքի ղեկավարի կողմից ներկայացվող պահանջագրերը:Խախտվել է <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները, այն է, որ հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա,որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարման փաստը: Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին,իսկ եթե դա հնարավոր չէ,ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

3. 2015-2018թթ համայնքում իրականացվել են մանկապարտեզի կապիտալ վերանորոգման աշխատանքներ,որի նախագիծ-նախահաշվի արժեքը կազմել է 39086,4 հզ. ՀՀ դրամ: Աշխատանքները իրականացվել են 16400,0 հզ. ՀՀ դրամով:Վերանորոգումը ավարտական փուլում է:2017-2018թթ իրականացվել է մշակույթի տան 2-րդ և 3-րդ հարկերի, ինչպես նաև մշակույթի տան տանիքի վերանորոգման աշխատանքներ: 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգման աշխատանքների նախագիծ-նախահաշիվը կազմել է 44650,3 հզ. ՀՀ դրամ, իսկ տանիքի վերանորոգման աշխատանքների նախագիծ-նախահաշիվը կազմել է դրամ 14629.0 հզ. ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքների վրա ծախսվել է 16742.5 հզ. ՀՀ դրամ: Վերանորոգման աշխատանքները շարունակվում են:Շինարարական աշխատանքները ընդհանրապես չեն իրականացվել մրցույթային կարգով, այլ իրականացվել են ապրանքների ձեռք բերումով և անհատ շինարարների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերով:

Ուսումնասիրություններից պարզվել է,որ 2015-2018թթ գնումների պլաններում ապրանքային կոդերը բացվածքներով չեն ներկայացված, այլ ներկայացված են ընդհանուր խմբային կոդերով: Խախտվել է ՀՀ կառավարության 13.04.2017թ N 390-Ն որոշման հավելված 3-ի գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգի պահանջները, ինչպես նաև խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները,այն է, որ մեկ գնման առարկան բաժանվել է առանձին չափաբաժինների,մրցակցային ձևի կիրառումից խուսափելու նպատակով:Գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ են նախատեսվել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված ոչ համապատասխան հոդվածներով:Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները, այն է, որ

գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով:

4. Համայնքապետարանի աշխատակազմի հաստատված հաստիքացուցակներով տարիներ շարունակ պահվել է 1 միավոր մեխանիզատորի հաստիք՝ համայքապետարանին պատկանող տրակտորներով համայնքի համար իրականացվելիք տարբեր տեսակի աշխատանքների համար: 2015-2018թթ ուսումնասիրությունները ցույց են տվել,որ նշված ժամանակաշրջանում համայնքի բյուջեից որպես աշխատավարձ է վճարվել 4 289 532 ՀՀ դրամ գումար: Սակայն նշված ժամակաշրջանում մեխանիզատորի կատարած աշխատանքների ծավալային բովանդակությունը չի համապատասխանում համայնքի բյուջեից իրեն վճարված աշխատավարձի չափին: Մասնավորապես մեխանիզատորը 2015թ կատարել է աղբավայրի ծածկման աշխատանքներ՝ ընդամենը 128լ դիզելային վառելիքի ծախսով, 2016թ համայնքում կատարել է ձյան մաքրման աշխատանքներ՝ 128լ դիզելային վառելիքի ծախսով,2017 թ սեպտեմբերին կատարել է համայնքի ազատամարտիկների հուշարձանի մոտ ջրագծի 250մ փոսերի քանդման և լցման աշխատանքներ՝224լ դիզելային վառելիքի ծախսով:2018թ աշխատանքներ չի իրականացրել: 2018թ մայիսի 29-ին մեխանիզատորը ազատվել է աշխատանքից:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

***(վերլուծություն)***

Համայնքի ղեկավարի ծառայողական մեքենայի համար, ավագանու որոշմամբ տրամադրվում է օրական 12լ. բենզին:

Հաշվարկները կատարվել են 2013 թվականից, այն պատճառով, որ 2013թ-ին համայնքապետարանի կողմից որպես համայնքապետի ծառայողական մեքենա, գնվել է NISSAN SENTRA 1.8 մակնիշի 2013թ արտադրության մեքենա, այսպիսով պարզվեց, որ 2013թ-ից մինչ օրս ընդհանուր առմամբ գնվել և տրամադրվել է համայնքի ղեկավարին 14 820լ բենզին, ընդհանուր 5 767 885 դամ արժեքով:

Ուսումնասիրվել է մեքենայի տեխնիկական բնութագիրը և պարզվել է, որ մեքենան վարման խառը ռեժիմում ծախսում է 6,9լ բենզին 100կմ-ին, հաշվի առնելով, որ մեքենան ծառայում է համայնքին և հիմնականում պետք է շահագործվի համայնքային և դաշտամիջյան ճանապարհներով, կարող է գերածախսով աշխատել, այդ իսկ պատճառով 100կմ-ի համար ընդունել ենք 8լ ցուցանիշը:

Մեքենայի վազքը ստուգման պահին ֆիքսվել է 110 000 կմ , եթե ընդունենք, որ մեքենան շահագործվել է միայն աշխատանքային օրերին և բացառապես համայնքի կարիքների համար և երբեք , ոչ մի մետր չի շահագործվել անձնական կարիքների համար, նույնիսկ այդ պայմաններում հաշվարկները ցույց են տալիս , որ կա չարաշահում և համայնքային բյուջեից յուրացվել է առնվազն 2 350 000դրամ գումար:

Ներկայացվում է հաշվարկներն ըստ համապատասխան տարիների՝

| | | | |
|---|---|---|---|
| 2013թ | 2 230 լ | 448 դրամ | 999 040 դրամ |
| 2014թ | 1 785 լ | 450 դրամ | 803 250 դրամ |
| 2015թ | 3 000լ | 415 դրամ | 1 245 000 դրամ |
| 2016թ | 3 860լ | 342 դրամ | 1 320 120 դրամ |
| 2017թ | 3 945լ | 355 դրամ | 1 400 475 դրամ |
| Ընդամենը | 14 820լ | Միջին գին 390 դրամ | 5 767 885 դրամ |

110 000կմ * 0,08լ = 8 800լ բենզին

14 820լ – 8 800լ = 6 020լ

6 020լ * 390դ = 2 347 800 դրամ:

***2014 թվականին ձեռք է բերվել՝***

1. Տրակտոր՝ ՄՏԶ 82-1 2 միավոր 7 մլն * 2 = 14 մլն դրամ ընդհանուր արժեքով
2. Գութան՝ 2 միավոր 400 հազ + 370 հազ = 770 հազ դրամ ընդհանուր արժեքով
3. Ֆրեզ՝ 1 միավոր 600 հազ դրամ
4. Կարտոֆիլի շարքացան՝ 1 միավոր 520 հազ դրամ
5. Վակումային շարքացան՝ 1 միավոր 1,200 հազ դրամ

Ընդհանուր արժեքը կազմում է 17 090 000 դրամ:

Ձեռք բերման օրվանից տեխնիկաները չեն ծառայել համայնքապետարանի կարիքների համար, (չկան փաստաթղթավորված հիմքեր) տրակտորնորի հետ կապված առկա են 2 պայմանագիր՝ կնքված

11.05.2018-ին Ալեքսան Ալեքսանյանի և Անդրանիկ Առաքելյանի հետ այն մասին, որ տրակտորների շահագործման դիմաց պարտավորվում են տարեկան 300հազ դրամ յուրաքանչյուր տրակտորի դիմաց վճարեն համայնքի մանկապարտեզին, սակայն մանկապարտեզին վճարելու փոխարեն տրվել է սոց օգնություն 85 տարին բոլորած թվով 14 բնակիչների 20 000-ական դրամ, ընդհանուր թվով՝ 280 000 դրամ:

Եթե 2018թ-ի համար վարձավճարը կազմել է 300 000 դրամ յուրաքանչյուր տրակտորի դիմաց, ապա կարելի է եզրակացնել , որ 2014, 2015, 2016 և 2017 թվականների համար չվճարված գումարը կկազմեր 4*600000 ընդհանու 2 400 000 դրամ, այսինքն այս մասով ևս համայնքային բյուջեին հասցվել է առնվազն 2,4 մլն դրամի վնաս:

2014 թ-ից մինչ օրս տրակտորները շահագործվել են համապատասխանաբար 1083 և 1270 ժամ, տրակտորներգ մեկի փաստացի տնօրինող Ալեքսան Ալեքսանյանը մեզ հետ զրույցի ժամանակ փաստեց, որ 1083 ժամերից 83-ն է շահագործվել 2018թվականին, այսինքն տրակտորներից յուրաքանչյուրը տարեկան շահագործվել են առնվազն 250 ժամ: Փաստացի այս տեխնիկաները գնվել են համայնքի միջոցներով, բայց համայնքին եկամուտ չեն բերել և 17 090 000 դրամ գումարը ծախսվել է ոչ նպատակային:

*Աշխատանքային խմբի ղեկավար՝* **Գ. Հովհաննիսյան**

*Աշխատանքային խմբի անդամներ՝* **Է. Ղազարյան**

**Ռ. Երվանդյան**

**Ս. Սարգսյան**

**Ս. Սաֆարյան**

**Լ. Հարությունյան**

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված տեղեկատվության «վերլուծության» մասում շարադրված այն տեսակետի դեմ, որտեղ նշված է, որ կա չարաշահում և համայնքային բյուջեից յուրացվել է առնվազն 2350000 /երկու միլիոն երեք հարյուր հիսուն/դրամ գումար կապված համայնքին պատկանող ավտոմեքենայի 2013-2017թթ շահագործման հետ, որը պայմանավորված է տվյալ ավտոմեքենայի 100կմ վազքի համար առավելագույն ընդունված 8 լիտր ցուցանիշը:

Առարկում ենք վերոնշյալի դեմ հետևյալ հիմնավորմամբ.

Գտնում ենք, որ 2013-2017թ.-ին NISSAN SENTRA 1.8 ավտոմեքենայի շահագործմամբ պայմանավորված որևէ չարաշահում առկա չէ, քանի որ նախ տվյալ ավտոմեքենան շահագործվել է գյուղական համայնքում, որտեղ ասֆալտապատ է միայն կենտրոնական փողոցը, մնացած ճանապարհները գտնվում են ոչ այնքան բարվոք վիճակում, բացի այդ մեքենայի շարժիչի գործարկումը պայմանավորված է հաճախակի անջատումներով, ավտոմեքենան 2013թ.-ի արտադրության է և կապված տեխնիկական վիճակի հետ ավտոմեքենայի ծախսը կարող է տարիների ընթացքում մեծանալ:Նկատի ունենալով, որ ավտոմեքենան շահագործվում է բացառապես համայնքապետարանի կարիքների համար և հիմնականում շահագործվում համայնքի տարածքում՝ այդ թվում դաշտամիջյան ճանապարհներին,ուստի վերոգրյալի պայմաններում գտնում ենք, որ ավտոմեքենան շահագործվել է բենզինի առավելագույն գերածախսի պայմաններում՝ նվազագույնը 100կմ վազքում 9 լիտր ծախսով:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ համայնքապետարանի ավտոմեքենան երկու անգամ վթարվել է:

2015թ.-ի նոյեմբերի 16-ին Երևան-Արմավիր ճանապարհին համայնքապետարանին պատկանող ավտոմեքենան վթարի է ենթարկվել, որի արդյունքում 16.11.2015թ.-ից մինչև 29.02.2016թ. ընկած ժամանակահատվածում  ավտոմեքենան դարձել է շահագործման համար ոչ պիտանի: Քանի որ նշված  ավտոմեքենան 2013թ.-ի արտադրության է և նոր մոդելի է, ուստի ավտոմեքենայի վթարի հետևանքով վնասված մասերի վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերն հնարավոր էր ձեռք բերել միայն դրանց հատուկ պատվեր ներկայացնելով, ուստի ավտոմեքենայի վերանորոգման աշխատանքների ձգձգումը պայմանավորված է եղել նաև պահեստամասեր ձեռք բերելու դժվարություններով, այդ իսկ պատճառով մեքենան հնարավոր է եղել շահագործել  2016 թ.-ի մարտի ակզբներին:

Նշված ժամանակամիջոցում Անուշավան Սամվելի Մկրտչյանի  և համայնքապետարանի միջև  կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի արդյունքում համայնքապետարանի կարիքների համար շահագործվել է LAND CRUISER PRADO 4,0 մակնիշի ավտոմեքենան , որի շահագործման համար բենզինը տրամադրվել է համայնքապետարանի ավտոմեքենայի շահագործման համար հատկացվող վառելիքից,ուստի ծախսվել է նշված ժամանակամիջոցում  816 լիտր բենզին:

26.09.2016թ.-ին Երևան-Արմավիր ավտոճանապարհին տեղի ունեցած ավտովթարի արդյունքում, վթարի ենթարկված ավտոմեքենաները բախվել են նշված վայրում մայթեզրին կայանված համայնքապետարանին պատկանող ավտոմեքենային՝ հասցնելով վնաս, որի արդյունքում ավտոմեքենայի շահագործումը դարձել է անհնար: Բացի այդ նշված վթարի արդյունքում ՀՀՔԿ Վաղարշապատի քննչական բաժնում հարուցվել է թիվ 57125916 քր. գործը, որի արդյունքում հենց 26.09.2016թ.-ին համայնքապետարանի ավտոմեքենան տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք: 14.10.2016թ.-ին նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն, իսկ 06.04.2017թ.-ին ստացվել է փորձագետի թիվ 45551608 եզրակացությունը: 15.05.2017թ.-ին նշանակվել է լրացուցիչ դատաավտոտեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ "Փորձագիտական կենտրոն" ՊՈԱԿ-ին: Ավտոմեքենան հնարավոր է եղել շահագործել միայն 2018թ.-ի փետրվար ամսվա սկզբին, որը պայմանավորված է եղել քր. Գործի հարուցման հետ, այնուհետև մեքենայի վերանորոգման աշխատանքները կատարելու հետ:

Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքապետարանին պատկանող ավտոմեքենան հնարավոր չէր շահագործել, ուստի համայնքապետարանի և քաղաքացի Անուշավան Սամվելի Մկրտչյանի միջև 27.09.2016թ.-ին կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր և 27.09.2016թ.-ից մինչև 31.01.2018թ. ժամանակամիջոցում համայնքապետարանը օգտագործել է LAND CRUISER PRADO 4,0 մակնիշի ավտոմեքենան, որի շահագործման համար բենզին տրամադրվել է համայնքապետարանի ավտոմեքենայի շահագործման համար հատկացվող վառելիքից, ուստի ծախսվել է 4032 լիտր բենզին:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները, գտնում ենք, որ համայնքապետարանին պատկանող ավտոմեքենայի շահագործման համար նախատեսված վառելիքի հետ կապված որևէ չարաշահում առկա չէ, իսկ ավտոմեքենայի վազքը 110.000կմ լինելու փաստը պայմանավորված է որոշակի ժամանակահատված չշահագործվելու հետ:

Կից ներկայացվում է

1. թիվ 57125916քր. Գործով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման պատճեն
2. 17.11.2015թ. ԱՊՊԱ ոլորտում ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման հաշվետվության պատճեն
3. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի պատճեններ:

Ծանոթություն:Սույն առարկության հիմնավոր փաստաթղթերը լրացուցիչ կներկայացվեն:

-3-

# ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Գ.Գեղակերտ
վայրը

«16» Նոյեմբերի 2015թ.

Անուշավան Սամվելի Մկրտչյան /նույն. քարտ 000811430 տրված 17.01.2013թ. 057-ի
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
կողմից/ ,

այսուհետ՝ «Փոխատու», մի կողմից ,և
Գեղակերտի համայնքապետարան ի դեմս՝ համայնքի ղեկավար Ա.Առաքելյանի,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխառու, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան
1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն պարտավորվում է Փոխառուի ժամանակավոր անհատույց օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:
1.2. Փոխատուն Փոխառուի ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնում իրեն սեփականության իրավունքով պատկանող LAND CRUISER PRADO 4.0 27LM 777 պետհամարանիշի ավտոմեքենան:,
գույքի նկարագրությունը
այսուհետ՝ «Գույք»:
1.3. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:
1.4. Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:
2. Կողմերի իրավունքները և պարտականությունները
2.1.Փոխատուն իրավունք ունի՝
2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.
2.1.2. Գույքն օտարել երրորդ անձի: Ընդ որում, նոր սեփականատիրոջն են անցնում սույն պայմանագրով նախատեսված Փոխատուի իրավունքները, որը սակայն հիմք չէ սույն պայմանագրի լուծարման համար.
2.1.3. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.
2.2. Փոխատուն պարտավոր է՝
2.2.1. Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո մեկ օրվա ընթացքում.
2.2.2. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.
2.2.3. Գույքը հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով.
2.2.4. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների, ինչպես նաև Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:
2.3. Փոխառուն իրավունք ունի՝
2.3.1. պայմանագիրն ստորագրելուց մեկ օր հետո պահանջել Փոխատուից հանձնելու սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով.
2.3.2. Փոխատուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում,

6. Պայմանագրի գործողության ժամկետը
6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից սկսած և գործում է մինչև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գեղակերտի համայնքապետարանին պատկանող NISSAN մակնիշի 600LL70 համարանիշի ավտոմեքենան հնարավոր չէ ժամանակավորապես շահագործել՝ կապված 16.11.2015թ.-ին տեղի ունեցած ավտովթարի հետ, ուստի սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև մեքենայի շահագործման առաջին իսկ հնարավորության պահը, բայց ոչ ավելին քան մինչև 2016 թ.-ի փետրվարի 29-ը:
6.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:
7. Վեճերի լուծման կարգը
Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:
8. Այլ պայմաններ
8.1. Փոխատուի մահվան (վերակազմակերպման) դեպքում սույն պայմանագրով Փոխատուի իրավունքները և պարտականություններն անցնում են ժառանգին (իրավահաջորդին):
8.2. Փոխառուի վերաազմակերպման դեպքում Փոխառուի իրավունքները և պարտականությունները սույն պայմանագրով անցնում են իրավահաջորդին:
9. Եզրափակիչ դրույթներ
Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Փոխատու | Փոխառու |
|---|---|
| Արմավիրի մարզ | Արմավիրի մարզ |
| Ք. Էջմիածին | գ.Գեղակերտ |
| Մաշտոցի 10/19 | Մաշտոց 30 |
| Ա. Մկրտչյան | համայնքի ղեկավար |
| | Ս. Առաքելյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |

-5-

Պայմանագրի կողմ

Արմավիրի մարզ
գտնվելու վայրը՝ ք. Էջմիածին
Մաշտոց 10/19

Փոխառու

Գեղակերտի համայնքապետարան
գտնվելու վայրը՝ Արմավիրի մարզ
գ.Գեղակերտ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 57
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«16» «նոյեմբերի» 2015թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Գույքի անհատույց օգտագործման Ապրանքի մատակարարման

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «16» «նոյեմբերի» 2015թ.

Պայմանագրի համարը՝

Փոխատուն՝ Անուշավան Սամվելի Մկրտչյան և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս Գեղակերտի համայնքապետարան՝ ի դեմս համայնքի ղեկավար Ս.Առաքելյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Փոխատուն տրամադրել է հետևյալ գույքը՝

| N | Տրամադրված գույքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | LAND CRUISER PRADO 4.0 | | | | 16.11.2015-29.02.16 թթ. | 16.11.2015թ. | ----- | ------- |
| | ընդամենը | | | | | | ------ | |

Վերոհիշյալ գույքի վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Գույքը հանձնեց

________________
ստորագրություն

Մկրտչյան Անուշավան
ազգանուն, անուն

Գույքը ընդունեց

________________
Ստորագրություն

Առաքելյան Սերոժա
ազգանուն, անուն

-6-

| Պայմանագրի կողմ | Փոխառու |
|---|---|
| Արմավիրի մարզ<br>գտնվելու վայրը՝ ք. Էջմիածին<br>Մաշտոց 10/19 | Գեղակերտի<br>համայնքապետարան<br>գտնվելու վայրը՝ Արմավիրի<br>մարզ<br>գ.Գեղակերտ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«29» «Փետրվարի» 2016թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Գույքի անհատույց օգտագործման Ապրանքի մատակարարման՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «16» «նոյեմբերի» 2015թ.

Պայմանագրի համարը՝

Փոխատուն՝ Անուշավան Սամվելի Մկրտչյան և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս Գեղակերտի համայնքապետարան՝ ի դեմս համայնքի ղեկավար Ս.Առաքելյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Փոխատուն տրամադրել է հետևյալ գույքը՝

| N | Տրամադրված գույքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | LAND CRUISER PRADO 4.0 | | | | 16.11.2015-29.02.16 թթ. | 29.02.2016թ. | ----- | ------- |
| | ընդամենը | | | | | | ------ | |

Վերոհիշյալ գույքի վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Գույքը հանձնեց | Գույքը ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | Ստորագրություն |
| Առաքելյան Սերոժա | Մկրտչյան Անուշավան |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | |

# ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Գ.Գեղակերտ                                                    «27» սեպտեմբերի 2016թ.
վայրը

Անուշավան Սամվելի Մկրտչյան /Անձն. քարտ 000811430 տրված 17.01.2013թ. 057-ի
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
կողմից/ ,
այսուհետ՝ «Փոխատու», մի կողմից ,և
Գեղակերտի համայնքապետարան ի դեմս՝ համայնքի ղեկավար՝ Ս.Առաքելյանի,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխառու, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն պարտավորվում է Փոխառուի ժամանակավոր անհատույց օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Փոխատուն Փոխառուի ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնում իրեն սեփականության իրավունքով պատկանող LAND CRUISER PRADO 4,0 27LM 777 պետհամարանիշի ավտոմեքենան:,
գույքի նկարագրությունը
այսուհետ՝ «Գույք»:

1.3. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:

1.4. Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1.Փոխատուն իրավունք ունի՝

2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. Գույքն օտարել երրորդ անձի: Ընդ որում, նոր սեփականատիրոջն են անցնում սույն պայմանագրով նախատեսված Փոխատուի իրավունքները, որը սակայն հիմք չէ սույն պայմանագրի լուծարման համար.

2.1.3. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.2. Փոխատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո մեկ օրվա ընթացքում.

2.2.2. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.3. Գույքը հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.4. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների, ինչպես նաև Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1. պայմանագիրն ստորագրելուց մեկ օր հետո պահանջել Փոխատուից հանձնելու սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով.

2.3.2. Փոխատուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում,

6. Պայմանագրի գործողության ժամկետը

